

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բարին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք առանձին ենք սեփական չենք ձեռնարկել:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌԻՏԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Փամախեյի տանը):
Կայսրութեան ուրիշ թղթաբանները «ՄՇԱԿ» գրվում համար պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զափից դուրս բանաստեղծութիւն. Հայկական երկնային Պետերբուրգում. Ներքին լուրեր. — ՌԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պորտուգալիա և Անգլիա. Արտաքին լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԿԱՆԱԿԱՆ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամականք թիւրքաց Հայաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԱՓԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անցեալ 1889 թվականին մեր գրականութիւնը մի առանձին, սովորականից դուրս բան չարտադրեց: Եթէ կամենանք մի առ մի հաշուել այն բոլոր փոքր ի շատէ ուղարկութեան արժանի գրքերը և աշխատութիւնները, որոնք հայերէն լեզուով լոյս են տեսել անցեալ տարվայ ընթացքում, թէ կովկասում, թէ Կ. Պոլսում և թէ Եւրոպայում, կը տեսնենք որ հասարակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԱԿՆԵՐ ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

XVII

Բարեկամ.

Շարունակում եմ խօսքս վասպուրականի ժողովրդական բանաստեղծութիւնների և երգերի մասին, որոնց նուիրված էր անցեալ նամակս: Այժմ առաջ կը բերեմ մի քանիսը սիրային երգերից, որոնց մէջ փայլում է մի պարզութիւն, անկեղծութիւն և որոնց նման զգայուն գրել զեռ ևս Պոյսի բանաստեղծները չեն կարողացել իրանց Բոսֆորով, Շիշլիով և Նառ-գիւղով...

Անչիկ նազերով, զեռալ ծամերով
Ծամերով խաղկեմ 1) կիւնազ բաղերով
Անչիկ, զէօ պոյս արծթի թաս էր
Լաճիկ զէօ դիւս սրմալու ֆէաս էր
Կանչեմ, ես, արեւ, ջարեր լացուցեմ
Կանչեմ, ջան, արեւ, սարեր լացուցեմ
Շան կարիր—կուրբաթ, ճամլսէն դարձուցեմ:

Սա առաջարանն է զեռ ևս, ուր հեղինակը ինքն է խօսում, իսկ յետոյ տղան օխում է.
Լսոր ինչ օրի, ուրպաթի—պաթի
Խորած վարդապետ, կաթի չխասի 2)
Թէ ժուռ, թէ խասուն—ես եմ զէօ զաղող
Թէ թանգ, թէ էօսան—ես եմ զէօ զնող
Որ զիւ ես իմ խոր սիրուն խարանացուն
Որ ես էլ զէօ մօր օրաթի փեսացուն
Մեր երկու սիրտ թէ որ մէկ էին:

1) Մաղերի ժողովում. 2) Չհաս.

մահկանացուների մասններն էլ բաւական են այդ հաշիւը տեսնելու համար:

Մեր գրականութեան, ոչ քննական, ոչ վիպական, ոչ թատերական և ոչ գիտական,—եթէ միայն կարելի է ընդունել մեզ մօտ այդ ճիւղի գոյութիւնը,—չեն կարող պարծենալ, որ մի աչքի ընկնող քայլ արեցին, գրականութեան այդ ճիւղերից և ոչ մէկը ամբողջ տարվայ ընթացքում չը հարստացաւ մի այնպիսի աշխատութեամբ, որի լոյս տեսնելը մի առանձին նորութիւն կազմէր, որի երևան գալը հարցասիրութիւն առաջ բերէր, համար կրանք կամ հակակրանքի առիթ տար,—մի խօսքով չօչափէր մեր հասարակական կեանքի այժման զգայուն կողմերը...

Դա, ի հարկէ, աղքատութեան նշան է:
Ուղիղ օրանքից մի տարի առաջ առիթ ունեւալով խօսելու մեր գրականութեան մասին, մենք այն միտքը յայտնեցինք, որ ճշմարիտ է, մեր ժամանակակից գրականութիւնը մի առանձին հարստութիւն է ներկայացնում, բայց նա ընդունել է մի համակրելի և կենդանի ուղղու-

Ընկուն կրմանանք մէջ նկատն էօտի... 1)
Այժմ առաջ կը բերեմ մի ցայղարուագ (sérenade).

Վարդն ի պացվէ վանայ քաղքի էկէտար 2)
Աստուած սիրես, մէկը օրօխի 3) ձիւր 4)
տար:

Քեան 5) նազերով, զեռ, խօրօտիկ, տիւ
վիլն ես 6)

Անխաբհ կիտի, ալէմ կիտի—տիւ իմն ես...
Վարդն ի պացվէ առաւօտան խալխուտոց 7)
Իմ եար, բախչէն կայնէ, երկու ձեռն ի
ծոց.

Վարդն ի պացվէ առաւօտան շաղերով
Իմ եար բախչէն վարդ կը քաղի մաղերով...
Տես այժմ օրչափ սիրուն են հետեւեալ չորս տողերը, որոնց արտասանում է իր մատաղ ա-

մուսինը կորցնող նորահարը.
Էրանիկ զեռ, բախչի բուրբուր
Որ չես տեսէ ջիգրի մուռու 8)
Որ թէ տեսնաս ջիգրի մուռու՝
Կը թափի քո նախշուն փետուր...

Սիրային երգերից յետոյ, վասպուրականիցներէն սիրելի են երգիծական երգերը, օրհնէքները, առնէքները և այլն, որոնցից աւելորդ չեմ համարում մի քանի հատը առաջ բերել: Օրհն ու թիւն.

Օրհնիցի տունն ու անդիւրսն
Պառաւ ու խալխուրն 9)
Աղջիկն ու տղան
Խարսն ու փեսան
Թրքոտն ու մկնոտն

1) Անպէս կը կարենք որ լաւ սենեակի մէջ ենք. 2) Այլեւստան. 3) Ուղարկիր. 4) Ինձ. 5) Ով նազերով... 6) Դու արիւն ես. 7) Հաւը խօսելու ժամանակ. 8) Բանջարներ են. 9) Փոքրիկ կարաս. 10) Փոքրիկ հողէ աման. 11) Ուրիշ.

թիւն, այդ այն է, որ նա թողնելով հողիները աշխարհը, կանգնել է բնական հողի վրա, ճիշտում է մտնել ժողովրդի կեանքի մէջ, աշխատելով ծանօթանալ այդ կեանքին, և իմանալ այդ կեանքի հիւանդոտ և առողջ կողմերը:

Դա մեր աղքատ գրականութեան և մամուլի ամենահամակրելի կողմն է: Այդ պէտք է խոստովանել:

Տարաբաղաբար, մեր գրականութիւնը, ինչպէս միշտ, այս դէպքում էլ ապացուցեց իր զանգուղիտութիւնը և իրան յատուկ անշարժութիւնը: Մի նշանաւոր քայլ անելով դէպի առաջ, մեռած, վերացական ուղղութիւնից անցնելով դէպի բնական, ձգտելով մտնել ժողովրդի կեանքի մէջ և այդ կեանքով զբաղվել, այդ նոյն գրականութիւնը տարիներէց ի վեր ահա պատկուտ է այդ ձգտման շուրջը, անընդունակ լինելով աւելի խորը թափանցելու իր շօշափած հարցերի մէջ: Մեր գրականութեան և մամուլի մի ընդհանուր յատկութիւնն է այդ,—

դժուարութեամբ հաշտվել մի ուղղութեան, կամ մի գաղափարի հետ, և հաշտվելուց յետոյ մեկու մեկ մնալ նոյն ուղղութեան և նոյն գաղափարի վրա, չը հասկանալով որ այդ նոր ուղղութիւնը և նոր գաղափարը ինքն ըստ ինքեան նպատակ չէ, այլ տանում է դէպի աւելի խոր և աւելի լայն նպատակներ: Եւ այդ պատճառով այն բոլոր հարցերը, որոնք ներկայումս բոլորում են մեր ժողովրդի կեանքից, և որոնք մեր գրականութեան և մամուլի համար ամենակարեւոր հարցերն են համարվում, դանդաղ կերպով են առաջ գնում, և կամ բոլորովին առաջ չեն գնում:

Նոյն իսկ այն հարցերի վրա, որոնք յարուցված են տարիներ առաջ, նայում ենք բանաստեղծական կերպով, և ժողովրդի թէ ցաւերի և թէ պակասութիւնների վրա մեր համարեա բոլոր գործերը նայում են աւելի իբրեւ ընտրեալ գաղափար բանաստեղծի ծննդ, քան թէ իբրեւ լուրջ ուսումնասիրողներ, և որոնք մեր կամ մտաւոր իրաւիօրութեան լուրջ ցանկացողներ:

Թէ պանդխտութեան, թէ ժողովրդի տնտեսական դրութեան, թէ գաղթականութեան, թէ ժողովրդի մտաւոր վերածնութեան և թէ ուրիշ այդ տեսակ այլոց խնդիրների մասին լոյս տեսնող զանազան աշխատութիւնները, և մեր մամուլի զանազան օրգաններում տպագրվող զանազան յօդուածները կարգացողի վրա աւելի բանաստեղծական գրականութեան են թողնում, քան լուրջ ուսումնասիրութեան:

Բանաստեղծութիւն են անում, երբ նկարագրում են ժողովրդի նեղ դրութիւնը, մշակների դրութիւնը նկարագրելիս էլ բանաստեղծութիւն են անում, բանաստեղծութեան տիրապետութիւնն են անում, և այն ժամանակ, երբ խօսում են ժողովրդի տղիտութեան, կամ պանդխտների մասին. բանաստեղծութեան էք հանդիպում և այն դրուածներում, որտեղ պէտք է լինեն միայն լեւեր և փաստեր, որտեղ պէտք է լինեն լուրջ նախադէրներ և գիտութեան վրա հիմնած պրոգրամներ...

Եթէ մի ժամանակ, տարիներ առաջ, հարկաւոր էր դիմել ողորմութեան, եթէ մի ժամանակ հարկաւոր էր բանաստեղծօրէն նայել այս և այն խնդրի վրա, որպէս զի այդ խնդրը դառնար հետաքրքրութեան առարկայ,—այդ զեռ չէ նշանակում, որ նոյնը պէտք է անել տարիներ ընթացքում, այսօր կրկնելով այն, ինչ որ երէկ էր ասվում, իբրեւ նորութիւն հաղորդելով այն, ինչ որ շատ առաջ ուրիշները տեսել և տարրացրել են:

Բանաստեղծական գրիչներով տնտեսական, սոցիալական խնդիրներ չեն կարող պարզվել: Եւ բաւական է, որքան հասարակութիւնը բանաստեղծութիւններ կարգաց ամենաբարձր խնդիրների մասին: Այժմ հարկաւոր է մի քայլ ևս առաջ գնալ, և նայել կեանքի, այդ կեանքի հիւանդոտ կողմերի վրա ոչ թէ իբրեւ բանաստեղծ, այլ իբրեւ լուրջ ուսումնասիրող, առաջարկելով այն նախադէրներ, որոնք կարող են առողջացնել այդ կեանքի հիւանդոտ կողմերը:

Ոտնէդ ի վեր պողոճկես 1)
Երթաս քաղաք աղ առնես
Ձեթիկ-մէթիկ 2) ցաւ առնես
Տակդ փռն թանձր թաղիս 3)

Վերէն պառկես քեռասուն ամիս 4)
Քեանց 5) կալէմադ՝ 6) կալկվես 7)
Քեանց ծարէ—մադ՝ ծարծրվես (ցրիւ դաս)
Քեանց փոկէ—մադ՝ փեօկփկվես (քանդուտ-վիս)

Կտելով ճիւր խմես 8)
Ծամած խաց ուտես 9)
Երկրես, էրկրես 10), չը փրկնես 11) էտա
ցաւից

Չամիչ եօթ տիւր կըծ անես 12),
Ասեղը երկու թևով շաղկես
Նառն խառ՝ ամսէ—ամիս
Շաքրի կտոր՝ չիւմ 13) խինգ ամիս 14),
Վանայ ծով ձէթ էլնի
Չայիր-չիման ճրագ էլնի
Մէջիդ-մաղարսէն 15) պատրոյդ էլնի
Գիշեր ցորեկ հա վառվի
Խոզուդ թողութիւն չէլնի...

Կարգաւ, լաւ հասկացիր և կուշտ կը ծիծաղես:
Մնում է այժմ գրել մի հատ օրօրացի, մի

1) Ուսպոյցներ ունենաւ. 2) Մանր ու մեծ. 3) Թաղիւր. 4) Այսինքն երկար հիւանդ մընաս. 5) Ինչպէս. 6) Այս և յետագայ երեք տողեր մէջ երևում են 3 մաղեր. կալէմադ—կալի մաղն է, այսինքն ցորենի մաղ. ծարէ մաղ՝ չղարչից չինած մաղն է, իսկ փոկ է մաղ կալչուի մաղն է. 7) փակիկվես. 8) Հաւի պէս ջուր խմես. 9) Այնչափ թոյլ լինես, որ հացը ծամած զենն բերանդ. 10) Երկար հիւանդ լինես. 11) Չաղապակես. 12) Կծես եօթն անգամ. 13) Մինչև. 14) Այնչափ թոյլ լինես, որ նառն հատը մի և չաքարի կտորը հինգ ամիս հաղու ուտես. 15) Մզկիթ և թուրքի դպրոց:

Եւ իմէ աշտարակի և յաջորդ տարիներում մեր գրականութիւնը և մամուլը, թողնելով իրանց բանաստեղծական ուղղութիւնը, կը սկսեն աւելի խորը թափանցել հրապարակի վրա կանգնած հարցերի մէջ, — դրանով նրանք մի շատ մեծ քայլ արած կը լինեն, և տարբերելով նախորդ տարիների գործունէութիւնից, նրանք նոր լոյս կը տարածեն դեռ միմեկիսան քողով ծածկւած հարցերի վրա:

Խ. Մ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Մայրաքաղաքի «Новое Время» լրագրում կարգում ենք հետեւեալը. «Գիտականութիւնը 30-ին, շաբաթ օր «Յոսեփով» թատրոնում ներկայ էր անցրին բաղմունքի յօգուտ չքաւոր հայերի կազմած հայկական երեկոյթին: Հասարակութիւնը չափազանց առատածէս էր ծափահարութիւններում, շատ էին ծափահարում պ. Էքմալեանի ղեկավարութեամբ կազմած հայկական խօրին, որը մի շարք աղբային երգեր երգեց, տիկին Բեռնարդին վարձեցին, պ. Կոնստանտին, և պ. Անդրեյովն, որը մի քանի բանասեր երգեց և վերջապէս էլ մի երգչուհու, որը փոխարինել էր յանկարծ հիւանդացած ա. Ջալիլիէվին: Կենդանի պատկերները բաւական աջող էին: Ի հարկէ, նրանց բովանդակութիւնը կողման էր և կովկասեան պատերազմներն էին: Անտարակները ծափահարութիւնը մեծ խմբով անցնում էր դահլիճից դահլիճ և խմբում էր կողման ծափով դորդերով զարդարւած երկու կիսակներ շուրջը: Կիսակներում ծափում էր կովկասեան զինի, խաղող, մրգեր և այլն: Հասարակութիւնը մեծ բաղմունքով խմբում էր մանաւանդ այն կիսակի շուրջը, ուր ծափող տիկին Սափիան էր: Երեկոյթը բաւական լաւ տպագրութիւն թողեց և դահլիճների մէջ խռովող անաղին բաղմունքները գեղեցիկ պատկեր էր ներկայացնում: Ներկայ էր երիտասարդների մեծ բաղմունք, որը անհամբերութեամբ սպասում էր պարերի սկսվելուն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Տարիկեան նախնայի Մէլիտոսով քաղաքի բնակիչ պ. Պետրոս Չէրնիով, գրվելով «Մշակին» բացի օրանից մեր լրագրի մի տարեկան օրինակը նուիրել է նոյն քաղաքի հայոց ծխական դպրոցին:

ՄՈՍԿՎԱՅԻ Լազարեան ձեռնարանի հայոց լեզուի պրոֆէսոր, պ. Գրիգոր Խաչատրեան, ուղարկել է մեզ 10 բուրլի, հետեւեալ նամակով. «Կար-

քանի հատ կրօնական, մի քանի հատ պարբերական և բաւական եմ համարում այլ ևս, շատ կարելի է կարող եմ ձեռք բերել ժողովածուներ և նրանց միջից կարողաւ, եթէ միայն այդպիսի ժողովածուներ կան այդ կողմերում, մեզ մօտ միայն հայր Սրտանձեռանցի ժողովածուներն ունենք, որոնք դեռ ևս չափազանց քիչ են:

Օր հնարգէն և փառաբանական չափ ունեն, բայց նրանց մէջ նշանաւոր են ծննդեան երգը, որի մի քանի տողերը բաւական է քեզ:

Այսօր ծնունդն ի Մայրեմա, ալէլուեա Մայրամ կնաց դուռն ծերին, ալէլուեա Քեանակն ի դարկ խաչաքերտին, ալէլուեա Ծնաւ իպէ Քիտաւ որդին և այլն:

ձրագալոյցի գիշերը իւրաքանչիւր թաղի փողերիկները խումբ խումբ կտուրների վրա են ելնում, բայց երբիկներից կարն են զգում իրանց դուռնի շինած լապտերները և երգելով փող կամ այլ բան են պահանջում այդ երգով: Հետաքրքիր է «Կարօս—խաչ» կնչվող երգը, որի մէջ պատահում է Մովսէս երկրում պատահած մի հրաշալիք՝ այսպէս.

Քեանաւուն խօտաղ իրար ինչան
Կնացին խաւան մէջ կէս դաշտին
Ուրեց միջին խորհուրդ արին
Մէկ պէտէ խաչ մը շինեցին:

Յետոյ պատմում է թէ ինչպէս խաչը տնկեցին «Կարօսի» ածուի մէջ, թէ ինչպէս խաչը թռաւ դնաց տաճարի մէջ և այնտեղ լոյս էր սփռում, զիպի «զգիրը» քերթ աղային ասեց, որ խաչը աղայի սենեակի համար կը վայելէր, քերթը խըլում է խաչը, սակայն՝

Կատաղաւ Ալին, կատաղաւ ուր ձին
Գարծաւ կերաւ ուր ձիւն ցին

դացի «Մշակին» 145-որդ համարում այն ցաւալի լուրը, թէ վրացոց մէջ հռչակ ունեցող Միսիմ-ձորաբնակի երկրագործական դպրոցը նորերս այրվել է: Միանգամայն համաժողով լինելով ձեռք բերողի աշխատակցի կարծիքին՝ թէ մեր դրացու դժբաղդութիւնը մերն է, և թէ հայերիս բարոյական պարտք կայ օգնութեան ձեռք մեկնել յինչալ դպրոցի վերականգնմանը, — ուղարկում եմ ձեզ անաւանի այդ նպատակի համար մի դոյն գումար, յուսալով, որ նաև փոքր ջանքերից նշանաւոր գումար կարող է կազմվել:

Երեւոյթի, յունվարի 9-ին թիֆլիսի թատրոնում՝ ներկայացվեց Բոսիլիի «Վիլհելմ Տէլ» հռչակաւոր օպերան: Օպերայի բովանդակութիւնը ծանօթ է այն բոլոր անձանց, որոնք կարդացել են Շիլլերի «Վիլհելմ Տէլ» դրաման: Օպերայի երաժշտութիւնը շատ գեղեցիկ է, մանաւանդ ուղեւորական բայց ներկայացումը շատ անաշուք անցաւ. բացի Մոլլաիսովից և մասամբ Տարտալովից, ու որ ձայն չունէր: Վանդերիկ մինչև այժմ կատարելապէս չէ առողջացել իր հիւանդութիւնից և նրա ձայնը մի մի անգամ կտրւում էր: Կանանց մէջ տիկին Բոսիլի դարձաւ հրապրեց հասարակութիւնը իր թարմ ձայնով և մշակված երգեցողութեամբ: Օրիորդ Քիչուրինա (երկրորդը) առաջադիմութիւն է անում թատրոնը իր էր:

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը որոշել է թիֆլիսի Արհեստագործ դպրոցում հաստատել մի նոր պաշտօն, այն է տեսչի պաշտօն: Այդ դպրոցը ունի զիրեկտոր, կամ, եթէ ուղեւորանք անպատճառ մի հայերին բառով ասել, ունի վերատեսչի, իսկ տեսչի (ИНСПЕКТОР) չունի: Քաղաքային գուման իր վերջին նիստում ընդունելով ուսումնարանական մասնաժողովի առաջարկը, հաստատեց նրա ներկայացրած նախաձեռնում:

Թիֆլիսի ժողովարանում, «Կանաչ սեղանի» հերթները, ի պատիւ ինֆլուէնցայի հնարեցին մի խաղ «Ինֆլուէնցա» անունով: Ի մեծ ցաւ այդ լիցենզիայի, կլուրի վարչութիւնը արգելել է «Ինֆլուէնցա» խաղը: Ինչ և իցէ, բայց մեր հասարակութիւնը հոգի առնող ինֆլուէնցայի յիշատակը յաւերճացնելու գործում աւելի մեծ եւանդ ցոյց տուցին, քան թէ նա ցոյց է տալիս հոգի առնող մարդկանց յիշատակը յաւերճացնելու գործում:

Մենք լսել էինք արդէն, որ Թիֆլիսից մի բժիշկ է ուղարկվում Պարսկաստան, խօշորայի և նրա տարածման մասին մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու համար: Այժմ «Тифлисский Листок»

Կատաղաւ մանուկն օրորոցին
Կատաղաւ խաւում մէջ ուր օդին
Կատաղաւ պարան մէջ ուր դիմին
Կատաղաւ զգիր մէջ ուր գոմին
Յետոյ քերթը խաչը դարձնում է, քառասուն զոռն է և այլն մատաղ է անում, որ աղաւթում են ինքը և իւրայինք այդ կատաղութիւնից:
Վերջիցս և այլ կոտական երգերը կազմված են սրտաբուր և պարզ խօսքերով: Նրանց մէջ չէ կարելի հանդիպել մի խրթին կամ անհասկանալի բառին: Իւրաքանչիւր վանք, իւրաքանչիւր ուխտատեղի ունի իր երգը:
Բազմաթիւ են նաև օրորոցի երգերը, որոնք երգվում են սրտառու եղանակներով և շատ ընդունալ են իրանց միակերպ խաղերով՝ քնացնել մանկան: Այն նրանցից ամենաընդհանուրը:
Օրոր տղան, օրոր բալաս
Հարաք քամին քէ տանի պիտի
Ձէթ—պէտ 1) աստղեր քէ դարդար 2) ասի,
Էն վերի 3) ոչխար, կեա քէ կաթ տայ
Ելիս ու ծաղկեա բոյը երկնայ:
Շուշան ծաղիկ քո վարդ երեսին
Ձղղղուն քամին քո օրորոցին
Օրոր բալաս, օրոր ծաղիկս....
Մի քանի պարերգեր են.

Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանկելու խամար
Ճնճողուկներ ժողվան եկան ուսելու խամար
Կրկայ 4) քեար ժողովիցի դարձնելու խամար
Թռան դնացին բերդի տանին 5) զանգուտ
Լու խամար:

1) Մանր ու մեծ. 2) Օրորոցի երգ. 3) Վայրենի. 4) Կատաղ. 5) Կոտոր:

լրագիրը հաստատում է այդ լուրը, աւելացնելով որ այդ նպատակով ուղարկվում է Պարսկաստան բժշկապետ Բարայեան:

Կովկասեան զինադատեստական ընկերութիւնը հրաւիրում է իր անդամներին ներկայ գտնվել ընկերութեան հերթական նիստին, որը կայանալու է վաղը, ուրբաթ օր, 12 յունվարին, 7 1/2 ժամին երեկոյեան: Կը կարդացվեն հերթական դործերը և Վ. Ի. Գիւլիսի կը կարդայ մի դեկլացում Թիֆլիսի Այգեղագործական դպրոցի վերակազմութեան մասին: Նիստին կարող են ներկայ գտնվել և կոչմանակ անձինք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՈՏՈՒԳԱՆԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Այն ընդհարումը, որ տեղի ունեցաւ Աֆրիկայում, Պորտուգալիայի և Անգլիայի պատկանող հողերի սահմանադիմում, Մակոլոյ Երկրում, որի ժամանակ պորտուգալացի Սերպա Պինտո մայորը հրամանով պորտուգալացիք հրապաններ արձակեցին անգլիացիներին դէմ, — հաջորդ արձագանք ունեցաւ թէ Պորտուգալիայում և թէ Անգլիայում: Ընթերցողը դիմէ արդէն թէ այդ դէպքը ինչ հետեւեցնէր ունեցաւ և դեռ ևս որոշ կերպով զգուշար է գոչակել թէ ինչ հետեւեցնէր կուսենայ մօտիկ ապագայում: Երկու երկրներն էլ յուզվեցան, Անգլիան սպառնալքներով իր յայտագրերը ուղարկեց Լիսաբոն, իր օտանալիս արած պատիւ համար բաւարարութիւն պահանջելով Պորտուգալիայից, սպառնալով, որ եթէ բաւարարութիւն չը ստանայ՝ նաւատորմ կուղարկի զէպի Պորտուգալիայի ափերը և այլն: Պորտուգալիան, աշխատելով պահպանել իր արժանաւորութիւնը, այնու ամենայնիւ, մասամբ բաւարարութիւն տուց արդէն Անգլիային, խաղաղասիրական պատասխան տալով Սոյսբրիի կառավարութեանը, և առ այժմ յոյս կայ, որ պատերազմ չլինելու չէ այդ երկու երկրներին մէջ: Անգլիան, ինչպէս հաղորդում են եւրօպական լրագրիները, թէ ընդհանրապէս բաւարարութիւն ստացած է համարում իրան, սակայն շարունակում է պահանջել, որ Սերպա Պինտո մայորը, որը և հանդիսացաւ ընդհարման պատճառը, Պորտուգալիայի կառավարութեան հրամանով յետ կանչվի Աֆրիկայից:

Թէ այդ տեսակ պահանջ ընելով Անգլիան ինչ նեղ դրութեան մէջ է զգում Պորտուգալիայի կառավարութեանը՝ կարելի է պարզել միայն մի կարճաբառ տեսութիւն անելով Պորտուգալիայի վերջին երկու դարերի զաղթական քաղաքականութեան մասին Աֆրիկայում:

Այ ճնճիկ
Սիլվան փորիկ
Կարմիր տոտիկ
Ուտեն կտիկ
Խմեն ճրիկ
Աւրիկ եղրիկ
Փախեն երկուն ման դալու խամար, և այլն և այլն:

Այս պարերգը երգում և պարում են թէ գիւղացիները և թէ քաղաքացիք: Այն մի ուրիշն է:

Սաւման կեղնէր բարակ ծուխ—կէջան
Ետրիկ մը ունէինք Բուլանբու—մրայէ
Ձարկից մախճաւ, թալից պուխ—կէջան
Երես կարմիր աչքեր թուխ—
Դէմ դէմ անշարի
Ըմրաւ ըմրաւ անշարի:

Այս երգը երգում են միմեկանց կպած՝ օտները եղանակի յարմար ետ ու առաջ տանելով և վերջին երկու տողը բոլորը միասին կրկնելով: Կան և ուրիշ պարերգեր, խաղեր, երգեր, մանկական խաղերի համար շինված արամախօսութիւններ, բայց որչափ ժամեր պիտի նստեն, որ՝ կարողանաւ բոլորն էլ գրել:

Երիտասարդների խաղերի մասին արդէն գրել եմ, կանանց և մանուկների խաղերի մասին առայժմ չեմ ասելու: շատ բան է քեզ առայժմ տալիս եմ մանկական մի խաղի նկարագրելը:

Էն ամա սիկ, օր չեմ ի տա 1).
Մանուկներից մէկը հովիւ է լինում և մի ուրիշը քերթի իսկ միւսները ոչխարի դիւր առած զնում են այնտեղ, ուր իրանց հովիւն է գնում, որը իր ձեռքերով աշխատում է պահպանել իր

1) Մատը վկայ օր չեմ տայ:

Այն ժամանակից, երբ Եւրօպայում սկսվեց նշմարել տեղային զաղթականութեան ձգտում դէպի Աֆրիկայի պէս անյայտ, անծանօթ հեռաւոր երկրներ, Պորտուգալիան բոլոր եւրօպական երկրներից առաջինն էր, որ ոտը դրեց և հաստատեց իր իշխանութիւնը էկվատորից դէպի հարաւ գտնվող Աֆրիկայի թէ արևելեան և թէ արևմտեան ափերի վրա: Իր դրաւած երկրները նա իր անվիճելի սեփականութիւն է համարում, քանի որ արդէն երկու դար շարունակ տիրում էր յինչալ երկրներին: Սակայն պորտուգալիացիք յայտնվեցան որպէս վերին աստիճանի անընդունակ զաղթականներ և ամբողջ երկու դար տիրելով Աֆրիկայի յինչալ ափերը, ոչինչ չարեցին երկրի հետազոտութեան և նրա բարւոքման համար: Նրանք Աֆրիկայի ափերից մի քայլ անգամ չը հեռացան դէպի երկրի ներքը, այդքան երկար ժամանակամիջոցում անտես առնելով անպիսի կոտորածներ խորքերը և միայն դրանով էին բաւականատեւ որ մի կողմից պահպանում էին երկրի ներքին սահմանները մայրենիներից, իսկ միւս կողմից անաղին մասը էին վերցնում օտարազգի նաւերով երկրի մէջ ներմուծվող բոլոր ապրանքներից: Նոյն իսկ անգլիական տիրապետութեան աճելը Աֆրիկայի հարաւում չէր անհանգստացնում ծայր, անհոգ և անշարժ պորտուգալիացիներին:

Միայն այս վերջին տարիները, երբ սևամորթների անհղին հայրենիքը սկսեց դուռնել բոլոր եւրօպական ազգերի ուղարկութիւնը, երբ Գերմանիան, Իտալիան, Անգլիան և Բելգիան հետգնեց հաստատվեցան Աֆրիկայի հիւսիսում և արևելքում, երբ Գերմանիայի ջանքերով հիմնվեց Կոնգոյի ազատ պետութիւնը, որը հիւսիսից իր բաղունները սկսեց տարածել դէպի Պորտուգալիայի հնադարեան սեփականութիւնները, — այն ժամանակ պորտուգալիական թէ կառավարութիւնը և թէ ազգը յանկարծ դարձեցան իրանց զարկող ջնից, անշարժութիւնից ու անգործութիւնից, վառվեցան մի նոր և անսովոր խանդով դէպի իրանց տիրապետութիւնները, որոնց երկու դար շարունակ իրանք կատարելապէս արհամարհում և անտես էին անում....

Յանկարծ ամբողջ պորտուգալիական ազգը վառվեց, բորբոքվեց մի տեսակ տենդային, անզուտ և անսահման «աֆրիկափոխութեամբ»: Պորտուգալիայի մայրաքաղաքի ժողովրդի մէջ մանաւանդ յուզմունքը, յափշտակութիւնը, դէպի իր աֆրիկեան զաղթականութիւններն ունեցած ազգասիրական զգացմունքը՝ չափ ու սահման չունէր.... Հիմա ամենքը հիացմամբ նայում էին Աֆրիկայի պաշտօնական բարեփոխման վրա, որը պատրաստված՝ լոյս հանված էր կառավարութեան հրամանով, և որի վրա նկարված էր Աֆ-

հօտը: Գալիս է քերթը և իր աղայի հրամանը հաղորդում է հովիւին, ուստի և այդ երկուսի մէջ անցնում է սոյն խօսակցութիւնը:

Քիւրդը.— Աղէն կասի իրակ տուր:
Հովիւ.— Խաղիդ էլնի, զանկ տար:
Ոչխարն էր.— Ձըսիկ, չըսիկ, իդար տարաւ:
Որովհետեւ քերթը ձեռքնում է արէթ վառել կայծակահանով:

Քիւրդը (գնում է և նորից յետ դառնում)
Ախ մէկ էլ տուր, մէկ էլ տուր, էն ինչիս, փէսի մօրուն իրեցաւ:

Հովիւ.— Ձանկ տար:
Ոչխ.— Ձըսիկ, չըսիկ, իդար տարաւ:
Ք.— (նորից գալով) Ախ էն ինչիս, իդարսի քէօգն իրեցաւ:

Աղէն կասի կաթ տուր:
Ք.— Խաղիդ էլնի, կթի տար:
Ոչ. ձըս, վըժ, ձըժ, վըժ, կթից տարաւ:

Ք. Ախ, էն բուսն կատուն իդարկ թալից
Աղէն կասի մածուն տուր:
Հ.— Խաղիդ էլնի, մէրի տար:

Ք. Աղէն կասի միւս տուր:
Հ.— Խաղիդ էլնի, մորթի տար:
Ք. Աղէն կասի դառն տուր:

Քիւրդը, որը սկսել էր կրակից, այժմ, տեսնելով որ խեղճ հայը պատրաստ է տալու ամեն ինչ, համարձակութիւն է ստանում և դառն է պահանջում. ահա միայն այդ ժամանակ, հովիւը փորձում է ընդիմանալ և ասում է՝

Էնա մասիկ, որ չեմ խառ
Խիկ քերթը երես է առնում և վազելով դէպի ոչխարները, գոչում է՝

Էնա մասիկ, որ կը տանեմ
Հովիւը պաշտպանում է ոչխարներին, բայց

րիկայի հարաւից մինչև Ատլանտեան ուղիւնսր լայն ժապաւնի պէս տարածվող պորտուգալիական երկրը, մի երկիր, որից երկու դար շարունակ մաղի չափ անգամ օգտվել չիմացաւ Պորտուգալիան, բայց որին հիմա, քաղաքացիական պատերազմի տակ իր համար անսպասելի հարստութիւններ ձգտելու, մի տեսակ էլզորադո էր համարում....

Եւ ահա ինչ որ երկու դար շարունակ անտես առան պորտուգալացիք, այժմ մի անգամից են կամենում կատարել.... Աֆրիկան պիտի հետաքրքրեմ ինքի, ուսումնական արշաւանքներ պիտի ուղարկվեն Աֆրիկա, երկրը հետազոտելու համար, պորտուգալիական զորակը պիտի ամեն տեղ պարզվի ու ամեն տեղ կայարաններ պիտի հիմնվեն... Կորեաները գումարներ նշանակեցին այդ բոլոր իրադրութիւն համար, թագաւորը իր մասնաւոր միջոցներէն փողեր նուիրեց նոյն նըպատակով: Կազմվում են առևտրական ընկերութիւններ, զինուորական արշաւանքներ և այլն:

Եւ ահա յայնպէս Անգլիան յայտնում է թէ ինքի իրաւունքն ունի Պորտուգալիան ձեռք մեկնի զէպի Աֆրիկայի այն երկրները, որոնք իրապէս Անգլիային են պատկանում.... Գրան հետեւում է Սերպա Պինտո մայորի ղեկավար սահմանադրվող վրա ընդհարումը և հրացաններից անգլիացիների դէմ արձակելը....

Մայոր Սերպա Պինտո թէ ժողովրդի և թէ մանաւանդ զօրքի մէջ օրվայ հերոս է դառնում: Զօրքը բացարձակապէս պատերազմ է ուղղում յանդուրդ: Անգլիային դէմ, իսկ Անգլիան պահանջում է պորտուգալիական կառավարութիւնից որ սա յետ կանչի Աֆրիկայից Սերպո Պինտո մայորին: Բայց այդ տեսակ ջայն անելը՝ կը նշանակէ վերաւերել զօրքի ինքնասիրութիւնը և նրա մէջ ահագին զգոհութիւն պատճառել:

Պորտուգալիական կառավարութիւնը, ինչպէս ասում են, երկու ջրի մէջ է գտնվում. նա պէտք է կամ պատերազմ վարէ Անգլիային դէմ, կամ իրան պատերազմ մէջ դնի զգոհութիւն առաջ բերելու թէ ժողովրդի և թէ զօրքի մէջ. իսկ վերջին տարիները առանց զրան էլ մեծ զգոհութիւն է նշանակում ժողովրդի և զօրքի մէջ ընդդէմ կառավարութեան. ժողովուրդը և մինչև անգամ զօրքը վարակված են հանրապետական գաղափարներով և ընդարձակ ազդեցութեան է կատարվում երկրի ամեն շրջաններում յօգուտ այդ գաղափարներին....

Մյուս ամենայնիւ կառավարութիւնը իրան համար երկու շարքերից աւելի ձեռնտու համարեց ընտրել փոքրագոյնը, աւելի ձեռնտու համարեց Անգլիայի առջև գլուխը խոնարհեցնել, քան թէ զիջանել ժողովրդի և զօրքի պահանջներին: Բաղմարի օֆիցէրներ և պաշտօնեաներ հե-

ռացրած են ծառայութիւնից, բաղմարի կալա-նաւորութիւններ են կատարվում լիտաւոնում, հանրապետական զոյն կրող արմատական լրա-զիրները շատերը խափանված են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մանչեսթըր քաղաքում ընակվող հայերը, իրանց քահանայի հետ միասին, ստորագրելով մի ուղերձ, ուղարկեցին այդ ուղերձը Գաղստօնին, անգլիացի ծերունի պետական մարդու 80-ամեակը նորհաւորելու նպատակով: Ուղերձի մէջ արտա-յայտված են այն զգացմունքները, որ ունեն հա-յերը ղէպի Գաղստօն, որը իր ամբողջ կեանքի ընթացքում իր համար նպատակ էր դրել պաշտ-պանել փոքրիկ աղբուրիւնների դատը:

—Անգլիական լրագրիւնները հաղորդում են, որ Ալաշկերտի հայ ազգաբնակչութեան մի մասը դիմել է պարսից կառավարութեանը, խնդ-րելով որ թալ տրվի հայերին դադարել ղէպի Պարսկաստան: Պարսից կառավարութիւնը պա-տասխանեց որ ոչ թէ միայն ուրախութեամբ կընդունի հայ աշխատասէր ժողովրդին, բայց և փող կը տալ հայերին ճանապարհածախսի համար, ապա հողեր կը բաժանէ նրանց Պարսկաստա-նում և նւթական խոշոր օժանդակութիւն էլ կը տալ երկրի ծաղկելու համար: Եւր Ալաշկեր-տի հայերը, պարսից կառավարութիւնից պա-տասխանը ստանալուց յետոյ, տեղեկացրին թիւր-քաց կառավարութեան ղէպի Պարսկաստան դադ-րելու իրանց ղիտաւորութեան մասին, —թիւր-քաց կառավարութեան կողմից հետեւեալ պատաս-խանը ստացվեց. «հայերը կարող են գնալ ուր որ ուզում են»:

—Լիտաւոնից հեռագրում են, որ այնտեղ անգ-լիական զինպատան ղէմ ժողովուրդը կատարի թշնամական ցոյցեր է անում: Ժողովուրդը փո-ղոցներում գոչում է. «կորչի Անգլիան»: Դեպա-նատունը պաշտպանվում է զօրքերով:

—Հոսմի քաղաքային դոմայի մէջ ձայնաւոր-ներից մէկը այս օրերս յայտնեց, որ բանտները սովից տանջվում են, և եթէ զրա վրա լուրջ ու-շադրութիւն չը դարձնի, կարող են ծանր ան-կարգութիւններ առաջ գալ:

—Պարիզում մեծ ուշադրութեամբ են հետեւում սպանիական մանուկ-թագաւորի առողջութեանը, համոզված լինելով, որ նրա մահը առաջ կը բերի երկրի մէջ քաղաքական շարժումներ և գուցէ նոյն իսկ հանրապետութիւն:

—Ինֆլուէնցայի պատճառով եւրոպական դիպ-լոմատիական շրջաններում և դանազան պարա-մենտներում գործերը կիսով չափ դադարել են:

—Խալիսի և Գերմանիան հաւանութիւն են

տալիս Պորտուգալիայի յայտագրին: Խալիսիան մինիստր-նախագահ Կրիսպի յայտնել է, որ կը պաշտպանի Պորտուգալիայի առաջարկութիւնը՝ դուժարել միջազգային մի կոնֆէրէնցիա, անգլո-պորտուգալիական վէճը խաղաղ կերպով վճարու-համար:

—«Vossische Zeitung» պնդում է, որ մարկիզ Սուրբի խախտեց միջազգային իրաւունքը, Պոր-տուգալիայի վերաբերմամբ անտրդար կերպով վարվելու դորձում: Լրագրիւրը աւելացնում է, որ պատասխանատուութիւնը Սուրբիի վրա կընկնի, եթէ Պորտուգալիայում հանրապետութիւն կը հրատարակվի:

—Գերմանիայի ընթերցողի առաջիկայ սեսիա-յում պրոֆէսոր Վիրսով առաջարկութիւն կանէ եւրոպական պետութիւնների ղինախափելու մասին:

—Սերբիայում սաստիկ յուզված են Բուզարիա-յի ղինաւորելու պատճառով:

—Կրետէ կղզու վրա խռովութիւնը սաստկա-նում է:

—Ասում են, որ Սերբիայի նախկին թագաւոր Միլանը Մոնակոյում եղած ժամանակ բուլղէա էր խաղացել և մեծ գումար տանուլ տուց:

—Գերմանալ Բուլանտէ շնորհաւորական հեռա-գիր է ուղարկել Բրազիլիայի հանրապետութեան նախագահ գեներալ Ֆոնտէկային, յայտնելով իր համակրութիւնը Բրազիլիայի մէջ հանրապետու-թեան հաստատման և աւելացնելով որ այժմ Ֆրանսիան շատ վատ է կառավարվում: Գեներալ Ֆոնտէկա հեռագրով պատասխանեց Բուլանտէին ստելով. «Եթէ բուլանտէիդ նշանակում է բռնա-ւորութեան դէմ խաղաղ մարտաւում, և ազա-տութեան, հաւասարութեան, եղբայրութեան ու ժողովրդի բարօրութեան հաստատելը, այն ժամա-նակ ես համաձայն եմ կանչել» կեցցէ Բուլանտէ:

—Գերմանական կայսրը հրամայեց, որ «Kreuz-Zeitung» լրագրիւրը այսուհետեւ չը ստացվի պա-լատում: Դրանից առաջ կայսրը ցանկութիւն յայտնեց, որ յիշեալ լրագրիւր և նմանապէս Շտե-կերի «Volk» լրագրիւր չը ստացվի զօրանոցնե-րում և օֆիցէրների ժողովարաններում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օղէսայում, տեղական լրագրիւնների խօսքերով, կազմվել է հին-հրէական լեզու սիրողների մի բաւական տարօրինակ ընկերութիւն: Այդ ընկե-րութեան, որը արդէն մի քանի տասնեակ անդամ-ներ ունի, —լիտաւոր նպատակն է ղէպի կեանք հրաւիրել և խօսակցութեան լեզու դարձնել հին հրէական լեզուն, որը վաղուց կորցրած է կեն-դանի լեզուի յատկութիւնը և զեռ պահպանվում է միայն հրէական գրքերի մէջ: Հետաքրքիրն այն է, որ հիմնական դադարաբաժնի զո՞հ է բերվում

վանի ուսումնարանների ֆրանսերէնի և տաճ-կերէնի ուսուցիչն է:

Գահանայ Զանիկեանի գրուածքներից երկուսը միայն ծանօթ է ժողովրդեան, ոչ թէ, որովհետեւ ապված է, այլ որովհետեւ լրբւ երբ երբում է, այդ երբերից մէկը խրիմեանի վրա է գրված:

Վաճառական Միշայէլ Թէրլէսիգեանը մի պարզ, հարուստ, սակայն շատ ժլատ և փոքր ինչ էլ իմաստակ բանաստեղծ է. եթէ հետաքր-քիր ես, վանի մէջ է տարի միտքող մի ուսու-ցիչ նրա բանաստեղծութիւնները մասին երկար խօսել է «Մասիս» շաբաթաթերթի մէջ, կարող ես գտնել և կարգաւ լաւ է գրում, լաւ կադ-մում է, բայց դեռ նոր սկսած լինելով և չունե-նալով մի ընդհանուր դարգացում իսկ՝ երբեմն իմաստակութիւններ է անում:

Ուսուցիչ խորէն խրիմեանը Հայրիկի եղբոր որ-դին է. մի քանի տարի Գերմանիա մնացել է, ոչ զորդ է և ոչ բանաստեղծ. Վարազայ տղա-րանում ունի տղած զերմաներէնից թարգմանած «Ալքենարան», բարոյական պատմութիւններ. նրա աշխատութիւններից ամենալաւը «Հայրենա-գիտութեան» երեք տետրերն են, որոնց առաջի-նով մանկան նա ծանօթացնում է իրան շրջա-պատող առարկաների հետ, վանի և Վասուր-բակիանի հետ շատ մանրամասն և երրորդով Հա-յաստանի հետ:

Կյոյը Համբարձումը—այդ վանի միակ լաւ դպրոցի հիմնադիրը, ունի միայն մի յայտնի գրու-ածք «Որը» անունով, որը արտաստեղծում է կարեւորողին, որովհետեւ գրված է տպաւորու-թեան տակ, երբ նա հաւաքում էր որբերին և տալիս էր հաց ու կրթութիւն: Աւելի ծանօթ է իր բարեբար, որովհետեւ նրա խնամքով այսօր

մինչև անգամ անձնական արժանաւորութեան զգացմունքը. հին-հրէական լեզուով ասված ոչ մի վերաւորական խօսք, ըստ պայմանի, չէ կարող վերաւորական համարվել, իսկ աւելի էլ հետա-քրքիրն այն է, որ այդ ընկերութեան անդամների թւում կան կանայք, և մինչև անգամ օրորողներ, որոնք ոչ միայն շատ լաւ խօսում են հին-հրէա-րէն լեզուով, այլ մինչև անգամ այդ լեզուով բե-ֆէրատներ էլ են գրում:

* * *
Կինը և մարդը հիւանդ են ինֆլուէնցայով. բժշկը դալիս է և դեղ է գրում: Միւս օրը նորից գալով, բժշկը հարցնում է թէ տեսնո՞ւր պակասել է արդե՞ք....

—Ոչ, մի և նոյն դրութեան մէջ է:
—Ուրեմն ուր իմ տուած դեղը՝ կօնիակը խինիայով չէ՞ք ընդունել....

—Ինչպէս չէ, պարոն բժիշկ, ճշգրտեմք կա-տարել ենք ձեր հրամանը, պատասխանում է մարդը:

—Եթէ այդպէս է, տեսնո՞ւր պէտք է պակասել, դարձեալ ասում է բժիշկը. քիչ ձեռք էք ընդու-նել իմ տուած դեղը:

—Կինը և մարդը հօ մի մարմին և մի հոգի են կազմում, այդպէս չէ, պարոն բժիշկ, վրա է բե-րում մարդը,—և ահա ես խմեցի կօնիակը, իսկ կնոջս տուեցի խինին ընդունելու.... Զարմա-նում եմ որ ձեր տուած դեղը իսկի չօգնեց մեզ....

* * *
Այս օրերս վախճանվեց աստուածաբանութեան երեւելի պրոֆէսոր, իգնատիոս Գիօրիշգը, 90 տարեկան հասակում: Հանգուցեալը յայտնի էր որպէս կաթօլիկ աղաատմիտ դպրոցի հիմնող Գերմանիայում, Նրա հետեւողները կրում են «հին-կաթօլիկներ» անունը, քանի որ հետեւում են հին-կաթօլիկութեան սկզբունքներին և բողո-քում են վերջին դարերում կաթօլիկութեան մէջ մտցրած նորաձեւութիւնների դէմ: Գիօրիշգը յայտ-նի էր իր գրուածներով պապի անսխալականութեան և կաթօլիկ եկեղեցու զերծումները դէմ, նմանա-պէս իր նշանաւոր քարոզներով:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻԱՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Վիէննա, 8 յունվարի: Բուլղարական նախկին բարձրաստիճան պետական գործիչներից մէկը մտադիր է վիէննայի Լէոգրեանի դէմ գան-գատ տալ, այն պատճառով որ բանկը չէ վճա-րում իրան այն փողերը, որ նա խոստացել է բուլղարական փոխառութիւնը անելու միջնորդու-թեան համար:

Նիւ-ԵՈՐԿ, 8 յունվարի: Այստեղ հրատարակ-ված է Սամսոն կղզիների վերաբերեալ դաշնագրերը Այդ դաշնագրով յիշեալ կղզիները համարվում են չէզոք և անկախ, իսկ Մալիտա—նրանց թագա-ւոր Արիւիպելագոսի բարձրագոյն դատաւորներին նշանակում են դաշնագրին ստորագրող պետու-թիւնները, իսկ նրանց մէջ պատահած տարա-

30-ի չափ օրերի՝ ուսած ուսուցիչ են վանի մէջ:
Վարդապետ Նախանեանը, որին այս օրերս կառավարութիւնը բռնելով աքսորեց իր «Արտար Հայաստանի» գրուածքի համար, յայտնի է հենց այդ գրուածքով՝ տպված է Կ. Պոլիս 1878 թվին. հետաքրքիր է այդ գրուածքի մէջ՝ Եփես ձկնալեզ-դին ծագման և որոշման լեզուական պատմութիւնը, նոյնպէս և Բալտի, Խարբըղի, Զարաւաշքի, Ճապաղ-Յուրի և Երզնկայի մասին տուած աշխա-հագրական մանրամասն տեղեկութիւնները:

Վարդապետ Փափաղեանը յայտնի է իր մի քանի «Փերականութիւն», Մանկավարժ, Նախա-ձայնի և այլն» դասագրքերով. 10—15 տարի անց է կացրել Ռուսաստանում և Պարսկաստա-նում: Թատրոնի ջերմ պաշտպան է. Երեմիայ Կ-պիսկոպոսը, որը այժմ մեռել է, թողել է շատ ձեռագիրներ, ուրիշներ (Հայրենասիրութիւն հա-յոց) գրուածքը շատ հետաքրքիր է. այժմ այդ եպիսկոպոսի ձեռագիրները չնչին փողերով ընկ-նում են սորա նրա ձեռքը և ոչնչանում շնոր-հիւ արծաթաւէր երկու վարդապետների, որոնք հանգուցեալի եղբայրներն են:

Վարդապետ Փերալեմեանը մի աշխատասէր վարդապետ է, ունի մի քանի գրուածքներ, նշա-նաւոր է նրա «Նոտարը հայոց»՝ պատմական ստուար գրուածքը, որի համար նա ծախեց իր տունը, Կ. Պոլիս դնաց և այնտեղ հատար առ. հատոր տպագրել է տալիս, թէն ունի տպված մի քանի ուրիշ բանաստեղծական գրուածքներ, սակայն անշան են:

Առ այժմ բաւականանում եմ այսքանով
Յր գրութիւն:

Ապրո

տեսնելով որ չէ կարողանում երկար ղլմանալ, համաձայնվում է մի գառը տալ այն պայմանով, որ քիւրդը յաջողի այդ պաշտպանելու ժամանակ եօթն անգամ ձեռքով խփել մի օր և իցէ ոչխա-րի: Եթէ յաջողեցաւ քիւրդը՝ տանում է:

Եւ այսպէս, հոլիւը այդ պայմանով մտիթար-վելով՝ տալիս է իր բոլոր ոչխարները:

Մարդ ծիծաղում է, երբ տեսնում է, որ հո-վիւը թէն շարունակ գոռում է «հնա մասիկ որ չեմ իտա», բայց տալիս է բոլորը....

Գեռ ևս անհամար են այսպիսի խաղեր, եր-գեր, նոյնպէս և բանաստեղծութիւններ. որոնց հաւաքելու համար, պիտի թողնել ամեն ինչ և յատկապէս այդպիսի բաներով պրազվել, իսկ ես, որ չեմ կարող այդ անել, ուստի և այսպիսի բաւական համարելով, կամենում եմ փոքր ինչ էլ քեզ ծանօթացնել վանեցի նորագոյն գրողների և բանաստեղծների հետ:

Ինչպէս որ կարելի է եղբակացնել, Վասուր-բակեանում էրգրուածքների պէս ոչ թիւրքերէն են երգում և ոչ էլ թիւրքերէն բանաստեղծութիւն-ների սիրահար են. այստեղ միշտ լսում ես հա-յերէն երգեր, միշտ տեսնում ես հայկական խա-ղեր, միշտ կարող ես հանդիպել հայ բանաստեղ-ծի և գրողի, որոնք թիւր չը կարողացայ ստուգել և սակայն առ այժմ ծանօթացայ մի քանիսների հետ:

Վասուրբակեանցիների ամենալաւ գրողն է քերթող խրիմեան Հայրիկը իր «Գրախոսի ընտա-նիք», Մարգարիտ արքայութեան երկից», «Մալի-ճառ», «Սիրտը և Սամուէլ» և «Հաւերակներ» գրուածքներով, որոնց հետ դուք անպատճառ ծանօթ կը լինէք այդտեղ: Երկրորդ տեղին է բրու-նում Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանը իր

ձայնավորների դեպքում, չվերագրող թաղա-
րը կալուածատիրութեան իրաւունքները են-
թարկվում են երեք անգամից բաղկացած մի
յանձնաժողովի քննութեան, որը կազմվում է
գաղապարի ստորագրող պետութիւնների ներկա-
յացուցիչներէր: Ապիւրում քաղաքային խորհրդի
նախագահը նշանակվում է նոյն պետութիւնների
կողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունվարի: Հրատարակված են
այն օրէրէնսդրութիւնների փոխաւորութիւնները,
որոնք վերաբերում են գիւղական և դատաստա-
նական հիմնարկութիւնների կերպարանափոխու-
թեան և նրանց գործադրութեան վեց նահանգ-
ներում: Պոկովի փոխ-նահանգապետ Տելիախով-
սկի նշանակված է Նիխիշի նահանգապետ:

ՄԱԴՐԻԴ, 9 յունվարի: Նոր միւնիստրութիւնը
կազմվեց: Սպաստա—մինիստր—նախագահ, Արմի-
տա—արաւելի գործերի մինիստր:

ՊԱՐԻԶ, 9 յունվարի: Իսնա դէպարտամենտի
մէջ գործադուլ անողների վերաբերեալ հարցի
քննութեան ժամանակ պատգամաւորների մոլոր-
ւում տեղի ունեցաւ մի մեծ սկանդալ, որը ա-
ռաջ եկաւ, երբ Ժոֆֆրէն, որը ընտրված է Բու-
լանմէի փոխարէն, ամբիոն բարձրացաւ Ստիպված
եղան Գիւրուշիւն, Միլվուային և Լադգերին
պիտուորական պահապաններով դուրս բերելու:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յունվարի 2-ին առաջին ներքին
փոխաւորութեան խաղաղութեան հետևեալ առ-
սերն են տարել 500 ր. գումարը:

№№ սկ. №№ տոմ. №№ տ.	№№ տոմ.
2200	1 6786 3
9784	1 18591 3
15353	1 2529 4
15673	1 2859 4
4214	2 4549 4
11354	2 5106 4
782	3 9318 4
5208	3 2130 5
2386	5 2223 16
5212	5 4076 16
5368	5 6805 16
6402	5 15631 16
11784	5 18900 16
12844	5 4165 17
14560	5 4538 17
15809	5 5307 17
10523	6 6316 17
11674	6 14371 17
13838	6 16695 17
16709	6 4205 18
18439	6 17482 18
6293	7 113 19
10739	7 3111 19
16141	7 13190 19
17388	7 16196 19
17680	8 16834 19
17693	8 19527 19
2829	9 758 20
2979	9 5855 20
10234	9 8835 20
13662	9 15325 20
19511	9 1768 21
19969	9 1898 21
1528	10 5065 21
7471	10 10007 21
8236	10 11406 21
8259	10 11860 21
8665	10 14706 21
10308	10 14984 21
19692	10 19446 21
10093	11 4930 22
10640	11 7619 22
12875	11 17872 22
13522	11 19497 22
14426	11 1433 23
14732	11 1485 23
4583	12 2956 23
6406	12 8907 23
8598	12 11636 23
13276	12 152 24
14455	12 8394 24
467	13 4348 25
1901	13 17946 25
8505	13 5531 26
9137	13 13372 26
12343	13 17474 26
16720	13 18635 26
2357	14 1312 27
8135	14 5338 27
8221	14 15549 27
8777	14 17849 27
15864	14 2192 28
17382	14 2830 28
18427	14 3085 28
1883	15 5324 28
8246	15 6805 28
10778	15 8991 28
16786	15 3020 29
1067	16 4144 29
11055	29 16538 40
11309	29 664 41
13830	29 1781 41

16210	29	10874	41
18221	29	13352	41
18711	29	15355	41
20	30	9626	42
105	30	12803	42
2957	30	18819	42
3924	30	1409	43
14490	30	2519	43
6681	31	2627	43
11601	31	3993	43
12043	31	13569	43
14107	31	17415	43
14363	31	19688	43
15262	31	985	44
10199	32	4201	44
13892	32	6277	44
16813	32	7324	44
1118	33	9921	44
3732	33	16582	44
4983	33	16999	44
13052	33	2331	45
17601	33	2443	45
18647	33	2622	45
18684	33	5745	45
2447	34	7569	45
5295	34	8081	45
6417	34	13523	45
19120	34	14730	45
5851	35	17947	45
6179	35	18927	45
446	36	1287	46
6365	36	3203	46
14497	36	11836	46
16278	36	15577	46
16968	36	19170	46
808	37	10919	47
2032	37	11345	47
2315	37	2599	48
7204	37	3956	48
9696	37	4186	48
14787	37	11381	48
16344	37	12553	48
16887	37	15026	48
7122	38	2625	49
7640	38	2855	49
11435	38	4894	49
13835	38	10172	49
18674	38	11557	49
19885	38	17570	49
782	39	18988	49
5364	39	857	50
8356	39	28	50
9025	39	8045	50
12958	39	9252	50
13127	39	11366	50
14006	39	11685	50
9052	40	11840	50
15470	40	14406	50

Յունվարի 2-ի առաջին ներքին փոխաւոր-
ութեան խաղաղութեան հանգրգանք տոմսերի սե-
րիան երկր ցանկը:

№: սեր.	17520	4178	17487	18367
15599	4508	7854	15616	2341
9472	1299	9693	18251	16691
13284	6532	13230	4853	7091
18563	7950	18472	9412	16164
14611	2671	9760	8551	3783
14621	15632	8655	10079	7763
6991	12135	16251	16796	15158
19562	8044	4644	19533	19273
16989	11779	12585	16076	3146
8523	19840	13849	7559	14363
18106	13108	11792	14408	13633
15477	8142	8824	17251	5825
3096	1433	13338	4857	7421
3901	16548	3632	2868	266
7415	13407	18685		

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐԱՍ

Յունվարի 9-ին	Յունվարի 9-ին	Յունվարի 9-ին
Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ—	90 ր.	—
Բեռլինի վրա 100 մարկ —	44	—
Փարիզի վրա 100 ֆրանկ —	35	80
Ռոսի — արծէ —	7	30
Մաքսային կուպոններ —	145	50
Արծաթ — — —	1	10
Բօրսային դիվիդենդներ —	6	70%
Պետակ. քանի. 5% տոմս 1-ին շրջանի	99	62
— — — — — 2-րդ —	99	50
— — — — — 3-րդ —	99	50
— — — — — 4-րդ —	99	50
— — — — — 5-րդ —	99	50
— — — — — 6-րդ —	99	50
Նոր 4% — — — — —	84	87
Արեւելեան 5% փոխաւորութ. 1-ին շրջ.	100	12
— — — — — 2-րդ —	100	37
— — — — — 3-րդ —	100	50
Ներքին 5% առաջին փոխաւորութ.	243	—
— — — — — երկրորդ —	228	50
5 1/2% րէնտա — — — — —	102	50
Ռուսիայ րէնտա — — — — —	163	50
Նոթերով կոնսոլիդ. փոխաւոր.	136	25
Նոր երկաթուղային րէնտա — — —	99	87

5% գրաւակ — թղթեր կալուած.
փոխ. կրեդ. ընկ. մետ. 135 > 25 >
— — — — — թղթայ. 93 > — >
Գրաւ. թղ. Ազնւ. քանի. 99 > — >
Գիւղական քանի. 102 > 75 >
6% գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 և 43 տ. — > — >
— — — — — Գուրմայիսի — 18 և 43 տ. — > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրի-
գացիաներ 95 > — >

Մոսկվայի քաղաք. օրիգացիաներ. . . 94 > 62 >
Օդէսայի — — — — — 94 > 62 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրի. — > — >
Ս. Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը
ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՏՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵԱՆՑԻ

ԳՏՆՎՈՒՄ Է ՍՈՒՈՒԱԿ, ԳԱՆՈՎԱԿԱՑԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՇԱՀՆԱԶԱՐՈՎԻ

ՅՈՒՎԱՐԻ 1-ից ՍՍԱՍԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՒՈՒ ԳԻՄՆԱ-
դիւայի, րէալա կան ուսումնարանի, կազմակերպող ԿՕՐԱՊԵՆԻ ԿՆԵՐՈՒՄԵՆ
ուսումնարանի համար:
Ուսումնարանում, բացի զանազան զինագիտական առարկաներից, աւանդ-
վում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լե-
զուներ:
Ցանկացողները կարող են ԳԱՇՆԱԿԻ (բոյալ) վրա ամէկ տղորի. զրա հա-
մար պանսիօնում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ:
Ուսումնարանում ընդունվում են երթեկներ, ԿԻՍԱՌՈՇԱԿԱՌՆԵՐ և ԹՈ-
ՇԱԿԱՌՆԵՐ:
Հասցեն. Тифлиς, Гановская улица, домъ Шахназарова. 3—5

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ

ԲԱՐՁՐ ԳԱՍՏԱՆ ՄԻ ԱՇԱԿԵՏՈՒԷԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԳԱՍՏԵՐ ՈՒՆԵՆԱԿ: Համաձայն
է աշակերտների և աշակերտուհիների պատրաստել ստորին դասարանների համար, և
կամ կրկնողութիւններ անել: Ցանկացողները իրանց հասցեն կարող են թղնել Մշա-
կի՝ Խմբագրատանը:

ԲԻԳԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱՆԱՐԱՆԻ ԼԻԿԵՆԵՐԻ
ՕՐԻՆԵՐԻ, ԳՈՒՆԱ-
ԿԻ, ԲՈՍԻ ԵՒ ԱՐԱԿԻ
— Ա. ՎՈՒՅԵՄԻՏ, ԲԻԳԱՅՈՒՄ —

Սպասողներին լսել է համարում լինել, որ Բիգայի սե բաղամբ, որը դործ է ամփում
տեղի, վատ մարտութեան և այլ ցանկերի դէմ, ծախվում է ոչ թէ միայն այլ և այլ զը-
ներով (նախկին իր արժանաւորութեան ու յատկութեան), բայց և ունի զանազան այս
կամ այն համ, այնպէս որ առնողը, ոտանայով զանազան բաղամբներ, հաւատ է կորցնում
զէպի այլ խմբի, որի պատճառով ևս իմ կողմից պարտաւորութիւն եմ համարում յայտ-
նել ընդհանուր տեղեկութեան, որ ԻՍ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԲԻԳԱՅԻ ԲԱՆԱՐԱՆԻ, ինչպէս առաջ էր
այնպէս և այժմ, ունի միմիայն ՄԻ ՏԵՍԱԿ ՀԱՄ. թէ և տեսակին նայելով զանազան զնե-
րով է ծախվում:
Բացի սրանից անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել և այն հանգամանքի վրա, որ
իմ ՄԻԱԿ ԲԱՆԱՐԱՆԻ Բիգայի բաղամբ կրում է սե զոյնի էտիկետը՝ ոսկեպ, արժանեաց և
ըրօնեպ կնիքով, նայելով թէ Ա. Բ. կամ Գ. տեսակի ե, վերս կրում է ՊԵՏԱԿԱՆ ՇՆԱ-
ՆԱԿՐՈՇՄ, իսկ կողքերից զանազան ցուցանողներով պարզաները: Այն ինչ ԲԻԳԱՅԻ Ա-
ՆՈՒՆԱԿԱՆ Բաղամբ, որը կրում է սպիտակ էտիկետներ, Բիգա քաղաքի պատկերով,
զա մրցութեան արդիւնք է և ոչինչ կապ չունի իմ միակ և իսկական, Կոնցլիսի ղեկաւորու-
թով (որը եւ ծառանդել եմ) պատրաստած բաղամբի հետ և որը կրում է 1845 թից զո-
յնութեան ունեցող իմ ֆիրման:

6—10 (Հ.) № 3 Ա. ՎՈՒՅԵՄԻՏ, Բիգայում:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET CO.

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Չորեքշաբթի, յունվարի 17-ին, ՄՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգեխուր, նաւա-
պետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում էլ Զօրդուլու տան, Նարեհէմնայա, և Թիֆլիսում նախկին Ար-
ժրուհի գալիերէում: № 114.

2—3

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Միջալեւան փողոցի վրա, Թիֆլիսում)

Տրվում են հայերէն գրքեր: Ամսական վճարը 20 կօպէկ է: Սկզբնական դպրոց-
ների աշակերտները և աշակերտուհիները վճարում են 10 կօպէկ:
Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երեկոյան 5 ժա-
մից մինչև 8 ժամ:

3—5